ԹՇՈՒԱՌ ԾԵՐՈՒՆԻՆ

« Բրդեա քաղցելոց զհաց քո, և զաղքատս անյարկս տար 'ի տուն քո »։

Ողորմեցարուք
Հիքի Ծերունւոյս,
Որ 'ի սեամն ձեր
Մատչի դողալով.
Ո՛վ ճոխք, դարձուցէք
Զաչըս ձեր 'ի նա։

Ահա աւուրք իւր
Մերձ են 'ի վախճան,
Հասէք յօգնութիւն.
Տացեն ձեզ երկինք
Ընդ ամըս յամայր
Ըզգանձըս բարեաց։

Ցընցոտիք զինև
Քաջ իսկ յայտ առնեն
Զիմ աղքատութիւն.
Եւ դէմք, ընդ որ ուղիք
Հոսեալ արտասուաց՝
Գործեն յորդք զակօս,
Ցոյդորեն ըզձեր
Զեռս յողորմութիւն։

Տէր է որ յըլէ
Մահացուացըս մեզ
Ըզթըչուառութիւն.
Պարտիմք անտըրտունջ
Տանել դառնաղէտ
Բախտին արկածից։

Կարէք և դուք ճոխք
(Ո՛հ հեռի 'ի ձէնջ
Հեռի այնպիսի
Դատըն պատահար),
Ի նոյն անկանել
Ի կարօտութիւն՝
Որ զիս խոցոտէ.
Կարէք դուք յանկարծ
Փոխել ըզխրախունս
Ի սով սոսկալի։

Էր ինձ կալուածիկ
Ի ժառանգութիւն,
Եւ վայելէի
Ցայնժամ 'ի բերկրանս.
Իբր ի սկըզբնածագ
Ճառագայթ արփւոյն
Հըրճուի ճրուղէ
Հաճ և գոհ թըշնիկ։

Այլ անիրաւ ոք,
Զբրկիչ տըկարաց
Անմեղաց ոսոխ,
Ի միում աւուրց
Ի հիւղէ իմմէ
Վարեաց զիս 'ի բաց,
Բերկրելով անգութ
Տեսանել տուայտեալ
Զիս 'ի տառապանս։

Էր ինձ ի սփոփանս
Դուստրը ցանկալի,
Այլ եղեռնագործ
Եւ ըզնա գաւով
Ոմն յամպարըշտաց
Բուռն յափրշտակեաց։
Եւ յայնըմհետէ
Ցօրինակ ժանտից
Հանդոյն առևանկ
Մուրացիկ շըրջի։

Հարսն իմ սիրելի
Մեղմէր զամենայն
Զիմ վիշտս. այլ և նա
Անկաւ յայնպիսի
Կեանս աղետալի,
Զի խաղաղութեամբ
Եւ լի հաւատով
Թողեալ զերկրաւորս
Հովիտ արտասուաց,
Ելիք զիս ի սուգ։

Գութք ի ձեզ անկցին
Ընդ ողորմելւոյ
Ծերունւոյս աղէտ։
Շնորհեսցեն երկինք
Զեզ ըզգանձս անքաւ
Բոլորիս բարեաց.
Ի բաց արասցեն
Ըզկարօտութիւն
Եւ ըզդժընդակ
Տառապանս ի ձէնջ։

Գրեաց Գ։

digitised by A.R.A.R.@